ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՒՐԱԲԻ ՂՈՐՂԱՆՅԱՆ

Ծնվել է 1833թ., Թիֆլիսում, տոհմական ազնվականի ընտանիքում: Ավարտել է Թիֆլիսի ռեալական գիմնազիան: Պետական ծառայության է անցել 1854թ.՝ Թիֆլիսում, այնուհետև աշխատանքի է անցել Երևանում՝ Կովկասի ուսումնական օկրուգի գավառական ուսումնարանում: Վերջինս հետագայում վերածվել է դասական պրոգիմնազիայի, որտեղ Հովհ. Ղորղանյանն աշխատել է որպես հոգաբարձու, ապա՝ ուսուցիչ՝ մինչև 1885 թվականը: Աշխատանքին զուգահեռ՝ ծառայել է Երևանի զինվորական նահանգապետի գրասենյակում՝ վարելով պատասխանատու պաշտոններ, կատարել է հատուկ հանձնարարություններ: Ծառայության ընթացքում հասել է պետական խորհրդականի աստիճանի:

1877թ. Կովկասի փոխարքայի հրամանագրով Հ. Ղորղանյանը կազմակերպել և գլխավորել է Երևանի քաղաքային ինքնավարությունը, իսկ 1879թ. հոկտեմբերին նշանակվել է Երևանի քաղաքագլուխ: Երևանի առաջին քաղաքագլուխը պաշտոնավարել է մինչև 1884թ. սեպտեմբերը:

Հ. Ղորղանյանը պարգևատրվել է Սուրբ Աննայի 3-րդ, Սուրբ Ստանիսլավի 2-րդ և 3-րդ աստիճանի շքանշաններով, 1853-1856թթ.՝ ռուս-թուրքական պատերազմի հուշամեդալով: